ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Տնտեսագիտական կրթության և հետազոտությունների աջակցման կենտրոն» հիմնադրամի և ԵՊՀ «Սահմանադրական տնտեսագիտության գիտավերլուծական կենտրոնի» միջև կնքված պայմանագրով նախատեսված «ՀՀ կենտրոնական բանկի անկախությունը որպես ՀՀ Սահմանադրության կարևոր նորմ» ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների վերաբերյալ

1. «ՀՀ կենտրոնական բանկի անկախությունը որպես ՀՀ Սահմանադրության կարևոր նորմ» ծրագրի շրջանակներում լույս է տեսել «ՀՀ Կենտրոնական բանկի անկախությունը Սահմանադրականության համատեքստում» վերտառությամբ մենագրությունը Ռ.Գևորգյանի, Հ. Ղահրամանյանի, Ժ. Մխիթարյանի և Վ.Սարգսյանի համահեղինակությամբ: Մենագրության մեջ ներառված են ծրագրի շրջանակներում իրականացված հետազոտական աշխատանքների արդյունքները, տպագրված հոդվածները, սոցիոլոգիական հարցման արդյունքների ամփոփ նկարագրությունը:

   Մասնավորապես, ամփոփված են գնաճի ժամանակակից տեսությունների զարգացումները, առանձնակի անդրադարձ է կատարվել գնաճային սպասումների տեսությանը: Աշխատանքում ներկայացված է ՀՀ կենտրոնական բանկի անկախության սահմանադրաիրավական էվոլյուցիոն, ինչպես նաև կենտրոնական բանկերի հիմնական նպատակների շուրջ ձևավորված միջազգային փորձի վերլուծությունը:

   Մենագրության մեկ այլ բաժնում նկարագրված է կենտրոնական բանկի անկախության և գնաճի ու ֆինանսական համակարգի կայունության միջև կապը, ամփոփված է ՀՀ Կենտրոնական բանկի անկախությունը միջազգային գնահատումների համատեսքստում:

   Մենագրության հաջորդ բաժիններում ներկայացված է Կուկիերմանի և GMT մեթոդաբանությունների հիման վրա կատարված կենտրոնական

բանկերի անկախության գնահատման արդյունքները: Անկախության աստիճանը համադրվել է այլ երկրների անկախության մակարդակների հետ՝ ՀՀ կենտրոնական բանկի դիրքի մասին պատկերացում կազմելու համար:

Մենագրությունն ավարտվում է ֆիզիկական անձանց, ֆինանսական կազմակերպությունների և ձեռնարկությունների շրջանում իրականացված «ՀՀ ԿԲ անկախության և գների կայունության վերաբերյալ» սոցիոլոգիական հարցման արդյունքների ամփոփմամբ:

Մենագրությունը կցվում է: /Հավելված 1/

2. Ծրագրի ավարտին նախատեսվում է կազմակերպել ՀՀ ԿԲ «Տնտեսագիտական կրթության և հետազոտություններ աջակցման կենտրոն» հիմնադրամ և ԵՊՀ Սահմանադրական տնտեսագիտության գիտավերլուծական կենտրոն ձևաչափով կլոր-սեղան հանդիպում: Հանդիպման ժամանակ ներկաների թվում կլինեն ՀՀ գործադիր և օրենսդիր մարմնի անդամներ, բիզնես-ոլորտի մասնագետներ, ՀՀ ԿԲ ներկայացուցիչներ, ինչպես նաև ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը, ասպիրանտներ և մագիստրանտներ: